ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԱՄԵՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 24 <<15>> <<02>> 2017թ.

☎ (0-255) 6-00-58
Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյան

Հարգելի պարոն մարզպետ.
Ձեզ ենք ներկայացնում Սարամեջ համայնքի ղեկավարի թիվ 06,07 որոշումները:

Առդիր 2 թերթ:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
գ.Սարամեջ (15.02.2017թ.)
Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» փետրվարի 2017 թվականի N 06 - Ա

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին և << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Սարամեջ համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել դպրոցի շենքը (հասցեն՝ գ. Սարամեջ , 1 փողոց 2 նրբ. թիվ 10):
2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (13.02.2017թ.)

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» փետրվարի 2017 թվականի N 07 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

Որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար Սարամեջ համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1.Ահարոն Մալխասյանի տարածքի պարիսպի 15քմ. (1 փողոց թիվ 1 հասցեում, համաձայնեցված է սեփականատիրոջ հետ) :

2.Արայիկ Հակոբյանի սեփական կառույցի ճակատային մասում 15քմ. (1 փողոց 2 նրբ. թիվ 1 հասցեում,
համաձայնեցված է սեփականատիրոջ հետ) :

3.Աղասի Գևորգյանին պատկանող կառույցի պատին 10քմ. (5 փողոց թիվ 1 հասցեում, համաձայնեցված է սեփականատիրոջ հետ) :

4.Զավեն Ավդալյանի տարածքի պարիսպին 10քմ. (5 փողոց թիվ 4 հասցեում, համաձայնեցված է սեփականատիրոջ հետ) :

Սույն որոշումը ներկայացնել Լոռու մարզպետարան :

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԵԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (13.02.2017թ.)

Կ.